ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1630 28.04.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան.

Դիտորդական խումբը սույն թվականի ապրիլի 27-ին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Մուշի բաժնի ՁՊՎ արձանագրել է, որ

1. Վ.Կ.Բ-ն ոստիկանության բաժին բերման է ենթարկվել 06.04.2016թ-ին ժամը 11.30-ին, ձերբակալվել է նույն օրը ժամը՝ 13.00-ին, ՁՊՎ է ընդունվել՝ ժամը 14.00-ին: Վ.Բ-ն ազատ է արձակվել Շիրակի ՄՎ Կումայրիի բաժնի պետի որոշմամբ՝ 09.04.2016թ-ին ժամը 11.40-ին, արդեն 72 ժամը լրացած:
2. Հ.Մ.Մ-ն ոստիկանության բաժին բերման է ենթարկվել 06.04.2016թ-ին ժամը 10.00-ին, ձերբակալվել է նույն օրը ժամը՝ 12.30-ին, ՁՊՎ է ընդունվել՝ ժամը 14.30-ին: Հ.Մ-ն 09.04.2016թ-ին ժամը 12.30-ին ազատ է արձակվել քննիչ՝ Է. Թումանյանի որոշումով: Արդյունքում՝ հաշվի չի առնվել նշված անձին բերման ենթարկելու ժամը և 72 ժամը հաշվարկվել է նրա ձերբակալման ժամից և խախտվել է նրա սահմանադրական իրավունքը:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրածը և տալ մեկնաբանություն:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԲԳ № 2185
03 05 2016 թ.

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

<< [illegible]
ՄՏԲԳ № 2812
02 05 2016թ.

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№2/2-1-2/32 «10» 06 2016 թ.

Ձեր 28.04.2016թ. թիվ 2621/1630 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ ապրիլի 27-ին ՀՀ ոստիկանության Շիրակի Մ/Վ Մուշի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Շիրակի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրամադրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Վ.Բ-ն ոստիկանության Կումայրիի բաժին բերման է ենթարկվել 06.04.2016թ. ժամը 11.50-ին (այլ ոչ 11.30-ին), ձերբակալվել է ժամը 13.00-ին և ժամը 14.00-ին ընդունվել է ոստիկանության Մուշի բաժնի ՁՊՎ: 09.04.2016թ. ժամը 11.45-ին (այլ ոչ թե 11.40-ին) ձերբակալված Վ.Բ.-ն ոստիկանության Կումայրիի բաժնի պետի կողմից կայացված որոշման համաձայն ազատ է արձակվել՝ սահմանված 72 ժամը դեռ չլրացած:

Անչափահաս Հ.Մ.-ն 06.04.2016թ. ներկայացել է (այլ ոչ թե բերման է ենթարկվել) ոստիկանության Կումայրիի բաժին և ժամը 10.00-ին վերջինս դպրոցական տեսուչի ուղեկցությամբ ներկայացվել է Շիրակի մարզային քննչական վարչության Գյումրու քննչական բաժին, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն ու նրա ազատ տեղաշարժման իրավունքը չի սահմանափակվել: Ժամը 12.30-ին Հ.Մ.-ն քննիչի կողմից ձերբակալվել է և ժամը 14.30-ին տեղափոխվել է ոստիկանության Մուշի բաժնի ՁՊՎ: 09.04.2016թ. ժամը 12.30-ին ձերբակալված Հ.Մ.-ն քննիչի կողմից կայացված որոշման համաձայն, ազատ է արձակվել:

Քանի որ Հ.Մ.-ն բերման չի ենթարկվել ոստիկանության Կումայրիի բաժին և նրա ազատ տեղաշարժման իրավունքները չեն սահմանափակվել, այդ իսկ պատճառով էլ նրա արգելանքի տակ պահելու ժամանակը հաշվվել է ձերբակալման պահից այսինքն նշված ձերբակալվածին արգելանքի տակ պահելու սահմանված ժամանակը չի գերազանցվել և նրա սահմանադրական իրավունքները որևէ կերպ չեն խախտվել:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ